# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 3
# ԵԱ-ԲՄԱՊՁԲ-22/16 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆՄԱՆ
# ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

07.04.2022թ.

ք. Երևան

2022թ.-ի ապրիլի 7-ին՝ ժամը 14:30-ին, ՀՀ, ք. Երևան, Թևոսյան 9 հասցեում գտնվող «ԵՐԵՎԱՆԻ ԱՎՏՈԲՈՒՍ» ՓԲԸ-ի շենքում տեղի ունեցավ ավտոմեքենաների վերանորոգման և պահպանման համար անհրաժեշտ պահեստամասերի ձեռքբերման ԵԱ-ԲՄԱՊՁԲ-22/16 գնման ընթացակարգի (այսուհետ՝ Ընթացակարգ) գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) նիստը: Հանձնաժողովի նիստին մասնակցում էին Հանձնաժողովի հետևյալ անդամները.

| | |
|---|---|
| Խաչիկ Մալոյան | «ԵՐԵՎԱՆԻ ԱՎՏՈԲՈՒՍ» ՓԲԸ-ի Շահագործման բաժնի պետ, |
| Նարինե Մելքոնյան | «ԵՐԵՎԱՆԻ ԱՎՏՈԲՈՒՍ» ՓԲԸ-ի Հաշվապահ, |
| Սերգեյ Մկոյան | «ԵՐԵՎԱՆԻ ԱՎՏՈԲՈՒՍ» ՓԲԸ-ի Տեխնիկ Հաշվառիչ, |
| Նաիրա Բաղդասարյան | «ԵՐԵՎԱՆԻ ԱՎՏՈԲՈՒՍ» ՓԲԸ-ի Հաշվապահ, |
| Զվարթ Ղազարյան | «ԵՐԵՎԱՆԻ ԱՎՏՈԲՈՒՍ» ՓԲԸ-ի Տնտեսագետ: |

Հանձնաժողովի նիստը նախագահում էր Խաչիկ Մալոյանը: Հանձնաժողովի նիստին ներկա էր Հանձնաժողովի քարտուղար Մարիա Ղազարյանը՝ «ՓՐՈՄՈՈՒՇՆ» ՍՊԸ-ի ներկայացուցիչը:

Հաշվի առնելով, որ Հանձնաժողովի կազմը բաղկացած է հինգ անդամից, իսկ Հանձնաժողովի նիստին մասնակցում էին Հանձնաժողովի բոլոր անդամները, հետևաբար՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 26-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված պահանջների համաձայն Հանձնաժողովի նիստը համարվեց իրավազոր և հայտարարվեց բացված:

## 1. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովը որոշեց հաստատել Հանձնաժողովի նիստի հետևյալ օրակարգը.

1. Հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին:
2. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2022/22 բողոքի քննության որոշումը կատարելու մասին:

Կողմ՝ 5, դեմ ՝ 0:

## 2. ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ ԹԻՎ ԳԲՔԱ-ՆԳ-2022/22 ԲՈՂՈՔԻ ՔՆՆՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄԸ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2022/22 որոշումը՝ Հանձնաժողովը որոշեց.

1. Հաշվի առնելով, որ Ընթացակարգը կազմակերպվել է էլեկտրոնային գնումների armeps համակարգով և ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի թիվ ԳԲՔԱ-

ՆԳ-2022/22 որոշումը տեղեկագրում հրապարակելու օրվա դրությամբ հրավերում փոփոխություն կատարելը համակարգի միջոցով անհնար է, Ընթացակարգը հայտարարել չկայացած՝ Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով սահմանված պահանջները:

Կողմ՝ 5, դեմ ՝ 0:

*Հանձնաժողովի նախագահ՝*

Խաչիկ Մալոյան ____________

*Հանձնաժողովի անդամներ՝*

Նարինե Մելքոնյան ____________

Սերգեյ Մկոյան ____________

Նաիրա Բաղդասարյան ____________

Զվարթ Ղազարյան ____________

*Հանձնաժողովի քարտուղար՝*

Մարիա Ղազարյան ____________